ՏԵՂԵԿԱՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2018-2021 ԹԹ. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (ՀՈՒՆՎԱՐ, ՀՀ ՊԵԿ կողմից վերահսկվող եկամուտներ)

ԱԺԲԳ









2021 թ. հունվար ամսին ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտները և պետական տուրքերը կազմել են 130.5 մլրդ դրամ, որը կազմում է 2021թ. առաջին եռամսյակի հաստատված ցուցանիշի 42.8 %-ը: Ընդ որում, 2021 թ. փաստացի ցուցանիշը 2020թ. համապատասխան ցուցանիշից պակաս է 11.0 %-ով կամ 16.2 մլրդ դրամով, 2019թ. համապատասխան ցուցանիշին գերազանցում է 28.1 %-ով կամ 28.6 մլրդ դրամով, իսկ 2018 թ. համապատասխան ցուցանիշին գերազանցում է 2.4 անգամ կամ 76.1 մլրդ դրամով:

2021 թ. հունվար ամսին՝

- ավելացված արժեքի հարկի գծով մուտքերը կազմել են 49.8 մլրդ դրամ, որը 2020 թ. համապատասխան ցուցանիշին զիջում է 2.8 %-ով, սակայն 2019 թ. ցուցանիշին գերազանցում է 29.0 %-ով, իսկ 2018 թ. համապատասխան ցուցանիշին գերազանցում է 53.7 %-ով:
- շահութահարկի գծով մուտքերը կազմել են 5.2 մլրդ դրամ, որը 2020 թ. համապատասխան ցուցանիշից պակաս է 50.3 %-ով, 2019 թ. ցուցանիշը 2021թ. համեմատ կազմում է -365 %, իսկ 2018 թ. համապատասխան ցուցանիշին գերազանցում է 79.3 %-ով,
- եկամտային հարկի գծով մուտքերը կազմել են 46.4 մլրդ դրամ, որը 2020 թ. համապատասխան ցուցանիշին գերազանցում է 1.5 %-ով, 2019 թ. ցուցանիշին գերազանցում է 21.1 %-ով, իսկ 2018 թ. ցուցանիշին գերազանցում է 2.6 անգամ կամ 28.7 մլրդ դրամով:
- ակցիզային հարկի գծով մուտքերը կազմել են 8.4 մլրդ դրամ, որը 2020 թ. համապատասխան ցուցանիշին զիջում է 47.5 %-ով, 2019 թ. ցուցանիշին զիջում է 19.2 %-ով, իսկ 2018 թ. ցուցանիշին զիջում է 50 %-ով:
- մաքսատուրքերի գծով մուտքերը կազմել են 4.9 մլրդ դրամ, որը 2020 թ. համապատասխան ցուցանիշին զիջում է 7.5 %-ով, 2019 թ. ցուցանիշից պակաս է 10.9 %-ով, իսկ 2018 թ. ցուցանիշին զիջում է 2.0 %-ով:
- բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարների գծով մուտքերը կազմել են 1.0 մլրդ դրամ, որը 2020 թ. համապատասխան ցուցանիշին զիջում է 52.4 %-ով, 2019 թ. ցուցանիշը 2021թ. համեմատ կազմում է -110.8 %, իսկ 2018 թվականի ցուցանիշին զիջում է 47.4 %-ով:
- շրջանառության հարկի գծով մուտքերը կազմել են 6.5 մլրդ դրամ, որը 2020 թ. համապատասխան ցուցանիշին զիջում է 18.7 %-ով, 2019 թ. ցուցանիշից պակաս է շուրջ 3.0 %-ով, իսկ 2018 թ. ցուցանիշին զիջում է 53.2 %-ով:
- սոցիալական վճարների գծով մուտքերը կազմել են 3.4 մլրդ դրամ, որը 2020 թ. համապատասխան ցուցանիշին գերազանցում է 54.5 %-ով, 2019 թ. ցուցանիշից ավել է շուրջ 127,7 %-ով, իսկ 2018 թ. ցուցանիշից ավել է 4.3 անգամ:
- այլ հարկային եկամուտներից մուտքերը կազմել են 2.8 մլրդ դրամ, որը 2020 թ. համապատասխան ցուցանիշին զիջում է 6.7 %-ով, 2019 թ. ցուցանիշից ավել է 5.5 անգամ, իսկ 2018 թ. ցուցանիշին գերազանցում է 233.3 %-ով:
- պետական տուրքերի գծով մուտքերը կազմել են 2.0 մլրդ դրամ, որը 2020թ. համապատասխան ցուցանիշից պակաս է 25.9 %-ով, 2019 թ. ցուցանիշին զիջում է 4.8 %-ով, իսկ 2018 թ. ցուցանիշին գերազանցում է 5.3 %-ով:

Հարկերի անցումային գերվճարները 2021թ. հունվարին կազմել է 0 դրամ՝ 2020 թ. - 56.2 մլն դրամի, 2019թ.-ի - 35.3 մլն դրամի և 2018թ.-ի 26.4 մլրդ դրամի դիմաց:

* ՀՀ պետական բյուջե հաշվեգրված հարկային եկամուտներ և պետական տուրքեր

** Ներառված են նաև. եկամտահարկից և պարտադիր սոցիալական ապահովության վճարներից եկամուտները.

*** Այլ հարկային եկամուտներում ներառված են՝ ճանապարհային հարկը, հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարները, հարկային օրենսդրությունը խախտելու համար գանձվող տուգանքները և տույժերը, միանվագ մաքսային վճարը, դրոշմանիշային վճարները և այլ եկամուտներ (այդ թվում նաև՝ ՀՀ ՊԵԿ արտաբյուջետային ֆոնդին մուտքագրված գումարները)

Տեղեկատվության աղբյուր են հանդիսացել ՀՀ ՊԵԿ կայքում հրապարակված տեղեկատվությունը 2018-2020թթ. ՀՀ ՊԵԿ կողմից վերահսկվող եկամուտների վերաբերյալ